Նորություններ

Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը

«1915 թ. Օսմանյան կայսրությունում շուրջ 1,5 մլն հայ է սպանվել, և դա Ցեղասպանություն էր», - հայտարարել է Ալեքսանդրիայում Հայ կաթոլիկ եկեղեցու արքեպիսկոպոս Գրիգոր-Օկսդինոս Կուսսան Հռոմում կայացած Աֆրիկայի եպիսկոպոսների սինոդում: Նրա խոսքերով, սպանությունների արդյունքում

հայերը Թուրքիայից սփռվեցին ողջ աշխարհով մեկ: «Հայոց պետության և հայ՝ կաթոլիկ, առաքելական և ավետարանչական եկեղեցիների առաջնորդները պահանջում են, որ Թուրքիան հրապարակավ ներողություն խնդրի: Մենք նաև պահանջում ենք, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, փոխհատուցում վճարի զոհերի սերունդներին և դառնա հայերի քաղաքացիական, քաղաքական և կրոնական իրավունքների երաշխավորը»,- ասել է Կուսսան:

Ինչ վերաբերում է Ցյուրիխում հոկտեմբերի 10-ին ստորագրված Արձանագրություններին հայ-թուրքական հարաբերությունների մասին, պրելատը նշել է, որ դա սկիզբն է երկու երկրների հաշտեցման ճանապարհին:

Ռուսաստանը պատրաստ է աջակցել

ԵԱՀԿ–ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Անվար Ազիմովը Հայաստանի և Թուրքիայի միջև «հարաբերությունների կարգավորման ճանապարհին առաջին քայլը» համարեց հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում դիվանագիտական հարաբերությունների հաստատման և երկկողմ կապերի զարգացման մասին արձանագրությունների ստորագրումը:

«Երկու հարևան երկրների միջև կլիմայի առողջացումը պետք է օբյեկտիվորեն նպաստի երկու պետություններում առևտրային կապերի աշխուժացմանն ու սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը, ինչպես նաև Անդրկովկասում խաղաղության և կայունության ամրապնդմանը: Ռուսաստանը պատրաստ է աջակցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, այդ թվում նաև փոխշահավետ երկկողմ համագործակցության նախագծերի հետագա իրագործման միջոցով», - ասել է ռուս մշտական ներկայացուցիչը:

Ադրբեջանի հակահայկական քարոզչության փործը խոչընդոտեցին

Օրերս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի երրորդ կոմիտեում շարունակվում էին քննարկումներն օրակարգի «Երեխաների իրավունքները» կետի շուրջ: Հոկտեմբերի 16-ին կոմիտեում ելույթներ են փոխանակել Հայաստանն ու Ադրբեջանը: Վերջինիս ներկայացուցիչը, շեղվելով բուն նյութից, որոշեց իր ելույթի մի մասը նվիրել «Հայաստանի կողմից գրաված տարածքների», «փախստականների, անօթևան բնակչության, երեխա զինվորների», Խոջալուի վայրագությունների նկարագրությանը՝ օգտագործելով ադրբեջանական կողմի հայտնի զրպարտանքների հայտնի համալիրը:

Ադրբեջանի ներկայացուցչի երկարաշունչ և անառարկայական ելույթն ընդհատվեց նիստը վարող նախագահողի կողմից. վերջինս մատնանշեց, որ ադրբեջանական կողմը չարաշահում է իրեն հատկացված ժամանակը և խնդրեց ավարտել ելույթը:



Наиболее употребительные слова и выражения. Русский текст, литературный текст и диалект

Вкусный – համэх – համов.
Внезапно – հանкарц – патр – кутур.
Возвращаться – вэрадарнал – ет дарнал, ед кал.
Возле (около) – мот, кохкин – кови.
Возможность – հнараворутюн – հнар
Вокруг – шурджы– чорстин.
Волноваться – алэкоцвэл, հузвэл – хасэвэт анэл.
Врать – сут асэл – суд асэл.
Все – болоры – алайы.
Всем семейством – ынтаников – олушахов, ындаников.
Встретиться – հандипэл – раст кал.
Всякий способ – амэн кэрп – алай гэк.
Второпях – штап – штап – апал – тапал.
Вчера – ерэк – эрэг.
Выбирать – ынтрэл – հындырэл, джогэл.
Выгонять, выгнать – врндэл – пахтал.
Выходить – дурс гал – дус эллэл.
В это время – айд жаманак – ида саhатин (жаманагин, арлыхин).
Вязание – հюсум – гордзэл.
Где – вортэх, ур – выдэх.
Головокружение – гылхаптуйт – глохы манн кука.
Гордый (гордо) – հпарт, гороз – кокрлэмиш эхац эрэцк.
Готовиться – патраствэл – հазир ылал.
Готовый – патраст – հазир, тахым.
Гром и молния – шант у кайцак – горум гадзак.
С грохотом – тындюнов – дамбур – думбур.
Грубый голос – кошт дзайн – хаба дзан.
Грязь – цэх, ахт – чамур, ахд.
Давно – вахуц – чохтан.
Двуличный – еркересани – эргуэрэси.
Девушка – ориорд – ахчик, саяхлы.
Деньги – пох – стаг.
Добро – барик – варцк.
Дагадаться – гылхи ынкнэл, հасканал – фархи эштал, эртал.
Доля – бажин – пай.
Достаточно – баваканачап – гоктэ, гыла.
Друг другу – мимянц – мэмэзги.
Думать – мтацэл – митк анэл (митки батэл).
Дурак – հимар – тэнтэк.

Использован материал из книги А.Г. Малхасяна «Русско–армянский разговорник», Ростов–на–Дону, 2008г.

Սովորեցրե՛ք ձեր մանուկներին բանաստեղծություններ

Մեսրոպյան տառեր

Անմար լույսեր եք,
Մեսրոպյա՛ն տառեր,
Որքա~ն հույզեր եք
Իմ սրտում վառել…

Բացվել են ձեզնով
Աչքերը մտքիս,
Վեհ երազներով
Լցվել է հոգիս:

Ձեզնո՛վ եմ զգում
Հմայքը խոսքի,
Բացում գիտության
Դռները ոսկի:

Կարդում հայրենի
Մեղմանուշ երգեր,
Հրաշքներով լի
Հեքիաթներ, գրքեր:

Ժամանակը ոսկի է

Իմ պապիկը՝ գործասեր,
Ամեն անգամ ինձ կասեր.
«Թե դաս ունես՝ սովորիր
Թե գործ ունես՝ կատարիր:
Օրը կանցնի, կգնա,
Ինչ որ չանես, կմնա:
Եվ մի օր էլ կտեսնես՝
Ուրիշներից ետ կընկնես…

Դու տղա ես՝ ժիր տղա,
Գործը քեզնից թող դողա:
Ուշքդ վրա՛դ միշտ պահիր,
Ժամանակդ խնայի՛ր:

Ձուր վայրկյան մի՛ կորցրու,
Ում որ կուզես հարցրու.
Աշխարհը մի խոսքի է՝
Ժամանակը ոսկի է»:

Կարդա

Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր,
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսավոր:

Գիրք կարդալով՝ դու գրքերում
Շատ նորանոր բան կիմանաս,
Շատ շատերից շատ բաներում
Մտքով հեռու կսլանաս:
Կարդա՛, ա՛յ իմ խելոք մանուկ,
Կարդա՛, գրի՛ր տարին բոլոր,
Կարդացողի խելքն է կտրուկ,
Միտքը պայծառ ու լուսավոր:

Արի ծանոթանանք

Ես դասագիրք եմ,
Իսկ դու՝ աշակերտ,
Ես պետք է լինեմ
Շարունակ քեզ հետ:
Դասի ժամանակ
Չպետք է խոսես:
Միտքդ իմ լույսով
Միշտ լուսավորես:
Լավ ժամանակդ
Մի՛ վատնիր իզուր,
Գիրք ու տետրակդ
Պահի՛ր միշտ մաքուր:
Պա՞րզ է ամեն ինչ:
Դե՛ լավ, այսուհետ
Ես քեզ՝ ուսուցիչ,
Դու ինձ՝ աշակերտ:

ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ

Է. «Երանի խաղարարարներին, քանզի նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն»

Այս երանին, որ թվով յոթերորդն է, այլևս չի խոստանում որևէ պարգև, ինչպես նախորդները, այլ հաստատում է, որ խաղարարարները կոչվելու են Աստծո որդիներ: Սա ինքնին վկայում է, որ այս երանին հայտնում է մի բարձրագույն պարգևի մասին, որ իր մեջ ամբողջացնում է նախորդ երանիների խոստումները, քանզի մարդու համար չկա ավելի մեծ կոչում, քան Աստծո որդի լինելը:

Խաղաղաուությունն Ամենասուրբ Երրորդության Անձերի փոխհարաբերության և Աստծո բնության էական հատկանիշն է: Աստվածային խաղաղությունն ուներ նաև իր արտապատկերն արարչագործության մեջ, որը խախտվեց չարի խռովությամբ նախ իմանալի աշխարհում, ապա ներմուծվեց զգալի աշխարհ՝ մարդու կամքով: Մարդկային բնությունը կորցրեց աստվածապարգև խաղաղությունը և լցվեց խռովությամբ ու թշնամությամբ: Քրիստոսով խաղաղություն է հաստատվում երկնքի և երկրի միջև, մարդն ոչ միայն վերստանում է կորցրած խաղաղությունը, այլ նաև հաստատվում աստվածային խաղաղության մեջ, որն անհասանելի էր առաջին արարչության համար: Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. Ես չեմ տալիս ձեզ այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս…» (Հովհ. 27-28): Այս խաղաղությունը վեր է ամեն տեսակ մարդկային մտքից և իմացումից (Փլպ. Դ 7):

Ոչ ոք չի կարող փախանցել խաղաղությունը մեկ ուրիշին, եթե ինքը չունի այն: Եվ խաղաղությունը նրանք են, ովքեր ոչ միայն հաղորդակից են այս բարձրագույն աստվածային շնորհին, այլ նաև կենդանի կրողներն ու բաշխողներն են: Այդպիսիները կոչվում են Աստծո որդիներ, որովհետև նրանք դարձել են կենդանի մասնակիցներն աստվածային արարչագործության և մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկագործության: Խաղարարարը Քրիստոսի պատկերն ու ներկայությունն է այս աշխարհում, նա դարձել է աստվածանման և աստվածային իրականության փոխանցող: Նախ՝ նրա մեջ խաղաղություն է հաստատված, այսինքն՝ ծառայական մարմինը ենթարկվում է իշխանական հոգուն, և հոգու ցանկական և ցասմնական ոլորտները կառավարվում են բանականի կողմից: Երկրորդ՝ նրա հետ շփվելիս և հաղորդակցվելիս մարդկանց հոգիները խաղաղվում են մեղքի խռովությունից և համակվում հոգևոր կյանքի բաղձանքով, մարդիկ սկսում են ներել ու սիրել միմյանց և այլ հոգևոր բարիքներ գործել:

Քրիստոսի փրկագործությամբ երկրի վրա հաստատվել է Նրա թագավորությունը՝ սուրբ Եկեղեցին: Ամեն օր եկեղեցում բաշխվում է Քրիստոսի խաղաղությունը. ահա թե ինչու «Խաղաղության ողջույնը» ամենակիրառական ծիսական տարրն է եկեղեցական պաշտամունքի մեջ, երբ ծիսակատար հոգևորականը խաչակնքելով ազդարարում է. «Խաղաղություն բոլորին», որին ժողովուրդը պետք է պատասխանի. «Նաև քո հոգուն»: Ըստ հայրերի՝ յուրաքանչյուր հոգևորական կոչված է խաղաղություն հաստատելու մարդկանց հոգիներում, բայց նախ ինքը պետք է ունենա այդ խաղաղությունն իր հոգում: Իսկ ամեն մի քրիստոնյա, որ մտնում է եկեղեցի, պետք է բացի իր հոգին այդ երկնային խաղաղության շնորհի առջև և նորոգված դուրս գա եկեղեցուց, որպեսզի փրկության լույսն ու ավետիսը փոխանցի մարդկանց և արժանանա կոչվելու Աստծո որդի: Վերջապես, խաղարարարներ են նրանք, ովքեր կարողանում են խաղաղություն հաստատել երկրների, պետությունների, ընտանիքների, եղբայրների միջև և մանավանդ այդ խաղաղությունը ծառայեցնել Աստծո փառքի համար:

«Գանձասար» աստվածաբանական կենտրոն